

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԵՐԿՐԿՅԱ ՔԱՂՅՐԱՀԱՍ ՋՐԵՐԻ  
ՀԻՂՐՈՒՄԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ  
ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական հետազոտությունների իրականացման և ջրավազանային կառավարման պլանների մշակման կարգն ու դրա առանձնահատկությունները:

2. Ստորերկրյա ջրերի հիդրոերկրաբանական հետազոտությունները (մոնիթորինգը) պետության կողմից իրականացվող գործառույթ է, որը կատարվում է ստորերկրյա ջրերի համապարփակ պլանավորման և կառավարման, այդ թվում՝ դրանց վնասակար ազդեցության դեմ պայքարի համապատասխան միջոցառումների մշակման ու ստորերկրյա ջրերի ռեժիմի ճիշտ կառավարման եղանակների համար:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական հետազոտությունների իրականացումը ներառում է՝

1) արտեզյան ավազաններում ստորերկրյա քաղցրահամ ջրերի ձևավորման գործընթացների քանակական և որակական հատկանիշների տարածաժամանակային փոփոխությունների հիմնական օրինաչափությունների որոշումը.

2) ստացված օրինաչափությունների կապն ստորերկրյա ջրերի օգտագործման ու պահպանման հետ.

3) ստորերկրյա ջրերի հաշվեկշռի կազմումը և գնահատումը.

4) ստորերկրյա ջրերի ռեժիմի կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումները.

5) ջրակեղծահամակարգերի պահպանման գոտիների սահմանների որոշումը:

4. Ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ են հետևյալ գործողությունները`

1) ջրակետերում (հորատանցքեր և աղբյուրներ) սիստեմատիկ մշտադիտարկումներ (մոնիթորինգ) կատարել ստորերկրյա ջրերի ռեժիմի և վիճակի (ջրի մակարդակի, ճնշման, ծախսի, ջերմաստիճանի, քիմիական և մանրէաբանական կազմի) նկատմամբ` նպատակ ունենալով սահմանելու ջրերի ռեժիմի ձևավորման օրինաչափությունները, տալու դրանց հաշվեկշռի գնահատականը, կազմելու ստորերկրյա ջրերի ռեժիմի կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ` ստորերկրյա ջրերի համապարփակ պլանավորման և կառավարման համար, ինչպես նաև սահմանել դրանց աղտոտման և սպառման աստիճանը, կանխատեսել ստորերկրյա ջրերի որակի փոփոխությունը, մշակել ջրատար հորիզոնների պաշտպանության միջոցառումներ: Արտեզյան ավազանների վերաբերյալ ամբողջական պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է մոնիթորինգի ազգային դիտարկման ցանցի (նախատեսված մեծ տարածքների վրա ստորերկրյա ջրերի հաշվեկշռի և ռեժիմի տարրերի ձևավորման օրինաչափությունների բազմամյա տարածաշրջանային ուսումնասիրությունների համար)` ինչպես բնական, այնպես էլ խախտված ռեժիմի պայմաններում դիտակետերը համալրել հատուկ դիտարկման ցանցի (նախատեսված ստորերկրյա ջրերի ռեժիմի և վիճակի ուսումնասիրության համար տեխնածին ազդեցության պայմաններում, առանձին առանցքային տեղամասերում որոշակի տնտեսական խնդիրներ լուծելու համար)` գյուղատնտեսական, արդյունաբերական, ձկնաբուծական դիտակետերով, քանի որ գյուղատնտեսական, արդյունաբերական և ձկնաբուծական նպատակներով ջրօգտագործումը կարող է հանդիսանալ ստորերկրյա քաղցրահամ ջրերի հնարավոր սպառման և աղտոտման օջախ.

2) ճշգրտել և տարանջատել արտեզյան ավազանների դրական (շատրվանող) և բացասական ճնշումային գոտիների սահմանագիծը.

3) ճշգրտել արտեզյան ավազանների ճնշումային ջրատար հորիզոնների դրական ցուցանիշի (ըստ հանքայնացման) սահմանագիծը.

4) վերականգնել հանքավայրի ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտարկման ցանցը (ազգային և հատուկ դիտակետերով)՝ հետագա մշտադիտարկումների անցկացման համար.

5) հանրապետության արտեզյան ավազանների տարածքում, ինչպես նաև այլ տարածքներում ջրօգտագործման թույլտվություններ տրամադրվում են՝ հաշվի առնելով ստորերկրյա ջրերի մոնիթորինգ իրականացնող մասնագիտացված կազմակերպության դրական հիդրոերկրաբանական եզրակացությունը:

5. Մինչև նոր ջրային ռեսուրսի (առայժմ չօգտագործվող) հիդրոերկրաբանական հետազոտությունների իրականացման ավարտը և դրանց հիման վրա եզրակացության կազմումը՝ ստորերկրյա ջրավազանը (կամ դրա տեղամասը) չի կարող օգտագործվել խմելու ջրի կենտրոնացված մատակարարման նպատակով:

6. Ջրավազանային կառավարման պլանները մշակվում են ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 16-րդ հոդվածի պահանջների համաձայն:

7. Ջրավազանային կառավարման պլանների մշակման գործընթացը բաղկացած է հետևյալ գործողություններից՝

- 1) ջրավազանային կառավարման տարածքի բնութագրում.
- 2) ջրային ռեսուրսների դասակարգում.
- 3) ջրավազանային կառավարման պլանների նպատակների սահմանում.
- 4) նպատակների իրականացման համար միջոցառումների ծրագրում.
- 5) սոցիալական, տնտեսական և բնապահպանական իրավիճակների վերլուծություն.
- 6) ջրավազանային կառավարման պլանների կազմում և հասարակական քննարկում.

7) ջրավազանային կառավարման պլանների իրականացման գործընթացի պարբերաբար ստուգում:

8) ջրավազանային կառավարման պլանների թարմացում:

8. Արտեզյան ավազանները ներառող ջրավազանային կառավարման պլանները մշակվում են՝ հիմք ընդունելով՝

1) ստորերկրյա քաղցրահամ ջրերի առանձնահատկությունները՝ ստորերկրյա ջրատար հորիզոնների ճնշումային առանձնահատկությունները՝ դրական և բացասական մակարդակները:

2) գրունտային ջրերի մակարդակների բարձր լինելը և, դրանցից կախված, հողերի պահպանության առանձնահատկությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ